

Վտանգավոր փորձեր

“Դիցուք դուք գտնվում եք 100-հարկանի շենքում և ունեք 2 միատեսակ շիշ: Շիշը շենքից ցած գցելուց ջարդվում է որոշակի հարկից սկսած: Անհրաժեշտ է ապացուցել, որ առավելագույնը 14 շիշ գցելու փորձից հետո կարող ես գտնել այն ամենացածր հարկը, որտեղից շիշը գցելուց կջարդվի: Եթե շիշը գցելուց չի ջարդվում, կարելի է իջնել, վերցնել այն և նորից օգտագործել:”

Հնարավոր է, որ հետաքրքրաշարժ մաթեմատիկայից տեղյակ եք այս խնդրի մասին: Այժմ պահանջվում է գրել ծրագիր այս խնդրի ավելի ընդհանուր տարբերակը լուծելու համար: Այսինքն, ձեր ծրագիրը պետք է ներածի շենքի հարկերի n քանակը, շշերի k քանակը և հաշվի, թե առնվազն քանի շիշ գցելու փորձ է պետք անել գտնելու համար այն ամենացածր հարկը, որից սկսած շիշը ցած գցելուց ջարդվում է:

Մուտքը

Տրված են երկու n ($100 \leq n \leq 2000$) և k ($2 \leq k \leq 60$) ամբողջ թվերը:

Ելքը

Ելքում պետք է արտածել մի թիվ՝ շիշ գցելու մինիմալ փորձերի քանակը:

Օրինակ

Մուտքը.

100 2

Ելքը.

14